

ՀԱՅԵՐԸ ՔՅԱԶԸՄ ՔԱՐԱԲԵՔԻՐԻ ՕՐԱԳՐԵՆՈՒՄ¹

Բանալի բառեր – Հայաստան, Կարս, Հայաստանի խորհրդայնացում, Մուսթաֆա Քեմալ, Քյազըմ Քարաբեքիր, հուշեր, մայիսյան հերոսամարտ, թուրք-հայկական պատերազմ

Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին հայ-թուրքական հարաբերություններն ուրույն տեղ ունեն Օսմանյան կայսրության և Հանրապետական Թուրքիայի ռազմական և քաղաքական հայտնի գործիչ Քյազըմ Քարաբեքիր փաշայի հուշերում²: 1918-1920 թթ. նա գլխավորում էր նորանկախ Հայաստանի դեմ թուրքական ռազմական գործողությունները³, իսկ Արևմտյան Հայաստանի տարածքում փաստացի շարունակում էրիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը՝ կազմակերպելով հայ որբերի իսլամացումը:

Քյազըմ Քարաբեքիրի օրագրում հայերի մասին բազմաթիվ վկայումներն առնչվում են թուրքական հակահայկական և ժխտողական քաղաքականությանը: Կարելի է անգամ շեշտել, որ թուրքական պաշտոնական պատմագրության և հասարակական-քաղաքական շրջանակներում տեղ գտած մի շարք կանխակալ ու հակագիտական պնդումների սկզբնաղբյուրը Քյազըմ Քարաբեքիրի աշխատություններն են⁴: Այժմ ևս հակահայկական թեզերն «ապացուցող» փաստարկների շարքում նրա գրառումները կարևոր դեր ունեն:

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ՝ 15T-6A319 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Քարաբեքիրի օրագրերը, որոնք տարիներ շարունակ կորած են համարվել, գտնվել են պատահաբար Ջաֆեր Թայյար Էդիլմեզ փաշայի տան պատերը քանդելիս: 6898 էջից բաղկացած 39 տետրերը վերաբերում են 1902-1948 թթ.: Արաբատառ տետրերի լատինատառ տարբերակը հրատարակվել է 2009 թ. պատմաբան Յուջել Դեմիրելի խմբագրությամբ: Տե՛ս **Koçak C.**, Karabekir'in Kavgası, İlk Defa Yayınlanan Belgelerle, İstanbul, 2016, s. 560, İnönü ve Karabekir'in günlükleri // http://www.cumhuriyet.com.tr/haber/diger/116218/inonu_ve_Karabekir_in_gunlukleri.html (մուտքի ամսաթիվ՝ 17. 05. 2017):

³ Օսմանյան բանակի գեներալ Քյազըմ Քարաբեքիր փաշայի (1882-1948) գլխավորությամբ թուրքական զորքերը 1918 թ. զավթել են Երզնկան, Էրզրումը, ապա նաև Սարիղամիշը, Կարսը, Գյումրին, Վանաձորը: Նա որպես Արևելյան ճակատի հրամանատար ղեկավարել է թուրքական զորքերի 1920 թ. արշավանքը Հայաստան, կազմակերպել ավելի քան 200 000 հայի կոտորած:

⁴ Քյազըմ Քարաբեքիրը թողել է տարբեր ժանրերի շուրջ 50 աշխատություն, մեծմասամբ՝ ինքնակենսագրական: Նշենք, որ Հայկական հարցին նա անդրադարձել է իր «Հայկական թղթապանակ» և «Հայերի դաժանությունը» գրքերում, որոնցում ևս փորձել է ընթերցողներին ներկայացնել հայի բացասական կերպարը: Տե՛ս **Karabekir K.**, Ermeni dosyası, İstanbul, 1994, *նույնի*՝ 1917-20 arasında Erzincan'dan Erivan'a Ermeni Mezalimi, İstanbul, 2000:

Ուշագրավ է, որ Քյազըմ Քարաբեքիրի ընդգծված հայատյացությունը նրա կերպարի շուրջ ձևավորված հերոսականության անբաժանելի բաղադրիչն է:

Թուրքական պատմագրության մեջ, ինչպես նաև հասարակական խոսույթում Քյազըմ Քարաբեքիրն ընկալվում է իբրև Թուրքիան «ազատագրող» հերոս: Դեռևս 1920-ական թվականներին նշանավոր թուրք կին գրող և հրապարակախոս Հայիդե Էդիփը նշել է, որ նա է «երկրի փրկությունը», ապա մեջբերելով Թուրքիայի Հանրապետության վարչապետ, իսկ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքի մահից հետո նախագահ Իսմեթ փաշայի 1920 թ. խոսքերը՝ գրել է. «Քյազըմ Քարաբեքիրն Արևելքում տարած հաղթանակով երեսներս պարզ դարձրեց»¹: Այսօր ևս մամուլի էջերում, ինչպես նաև գիտական, պաշտոնական և ոչ պաշտոնական ամբիոններից նման տեսակետներ շատ են հնչում: Օրինակ, Թուրքիայի Քարամանի նահանգում գտնվող Քյազըմքարաբեքիր գավառապետարանի պաշտոնական էջում նշված է. «[Քյազըմ Քարաբեքիրը] իր գործի հետ 1918 թ. փետրվարին *փրկեց* Էրզինջանը (Երզնկան – Ն. Պ.) և Էրզրումը ռուսների աջակցությունը վայելող հայկական բանակից»²: Իսկ Քյազըմ Քարաբեքիրի կրտսեր դուստրը՝ Թիմալ Քարաբեքիր Յըլդըրանը, պարբերաբար հանդես գալով հոր մասին դասախոսություններով և հարցազրույցներով, Հայոց ցեղասպանությունը համարում է «զագրելի սուտ» և պատմում հայ «չեթենների» դեմ պայքարում հոր հաջողությունների մասին³: Հայերի դեմ ատելության խոսքի նման դրսևորումները նպաստում են թուրքական հասարակության բնեռացման խորացմանն ու հակահայկականության աճին:

Հարկ է նշել, որ հայերին և Հայաստանին Քյազըմ Քարաբեքիրն անդրադառնում է հիմնականում Արևմտյան Հայաստանի տարածքում որբ երեխաների հավաքագրման, նրանց կրթության ու ապագայի հարցերի քննարկման և Հայաստանի առաջին հանրապետության հետ թուրքական կողմի հարաբերությունների համատեքստում: Սույն հոդվածում չքննարկելով առանձին բազմաշերտ հետազոտության առարկա հանդիսացող Քյազըմ Քարաբեքիրի կրթական-դաստիարակչական գործունեությունը⁴, անդրադառնալու ենք միայն նրա օրագրերում 1918-1920 թթ. թուրք-հայկական առնչությունների մասին գրառումներին:

Քյազըմ Քարաբեքիրն իր գրառումներում բացառում է անկախ Հայաստանի գոյությունը, առավել ևս օսմանյան տիրապետության տակ գտնվող

¹ Edib H., The Turkish Ordeal, Being The Further, New York, 1928, p. 122.

² <http://www.kazimkarabekir.gov.tr/kazim-karabekir-pasa> (մուտք՝ 04. 03. 2016).

³ Տե՛ս օրինակ՝ **Kazım Karabekir'in Kızı Timsal Karabekir**: “Babam Ermeni Çocuklarına Sahip Çıkardı” // <http://www.milliyet.com.tr/kazim-karabekir-in-kizi-timsal-karabekir-konya-yerelhaber-1271445/> (մուտք՝ 29.05.2017 թ.), **Karabekir**: Anadolu’da Türk soykırımı yapıldı // <http://www.haber7.com/tarih-ve-fikir/haber/1278332-karabekir-anadoluda-turk-soykirimi-yapildi> (մուտք՝ 18. 10. 2017):

⁴ Որբանոցների կազմավորմանը, որբերի հետ տարվող աշխատանքներին Քյազըմ Քարաբեքիրը օրագրերից բացի անդրադարձել է նաև իր տարբեր գրքերում: Տե՛ս **Karabekir K.**, Çocuk Davamız, İstanbul, 2015, *նույնի*՝ Kürt Meselesi, İstanbul, 1994:

տարածքներում. 1919 թ. մայիսի 3-ին, ի պատասխան անգլիացի զինվորականների՝ երրորդ բանակի սպա Հալիթ փաշային հանձնելու պահանջին, նա գրում է. «Ոչ թե մի մարդ, այլ նույնիսկ մի զենք, մի պուտ հող չենք տալու: Ավելին, մեր տված հողերն ենք վերցնելու և խաղաղություն ենք կնքելու: Շատ պարզ բան՝ Հայաստանը գրավելու ենք: Անշուշտ ոչ այսօր, բայց առաջին իսկ հնարավորության դեպքում: Սա ամբողջ հայրենիքում խաղաղության հաստատման բանալին է»¹: Նրա ամենասարսափելի մղձավանջը Հայաստանի ուժեղացումն էր: Ինչպես նա գրել է 1919 թ. մայիսի 31-ին, «Հայաստանի երազանքը եթե իրականություն դառնա, ապա դա մահացու հարված կլինի մեր ժողովրդի ապրելու իրավունքին» (էջ 582):

Իր օրագրում Քյազըմ Քարաբեքիրը բազմիցս շեշտում է հայերի՝ Օսմանյան կայսրության տարածքում բարեկեցիկ ապրելու փաստը՝ ի տարբերություն ցարական իշխանության տակ գտնվող հայերի. «Ինչ վերաբերում է ունեցվածքի և անձի անվտանգությանը, ապա Թուրքիայի կառավարության կողմից վերահսկվող տարածքներում ավելի անվտանգ է, քան Ելիզավետպոլի նահանգում» (էջ 136),– գրում է նա: Այս համատեքստում, բնականաբար, Հայկական հարցն ու հայերի պահանջները ներկայացվում են որպես եվրոպական պետությունների «հորինվածք»:

1894-1896 թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած հայկական կոտորածները, Քյազըմ Քարաբեքիրի կարծիքով, սոսկ հայ-քրդական բախումներ են, «հայ կոմիտեականների կողմից իրենց երևակայության մեջ ծրագրված և իրականացված կատակերգություն» (էջ 136): Նա նմանապես հերքում է Հայոց ցեղասպանության փաստը, սակայն 1918 թ. գրառումներում ակամայից հայկական կոտորածների հետևանքներն ի ցույց դնող մեկ-երկու դրվագ է նկարագրում. «[23 հունվարի 1918 թ.] Ակնում ենք: Գեղեցիկ գորգեր են պատրաստում: Աթոռի համար գնեցի: Նման բան մի դատավորի հարեմում էր արվում: Հայերը տեսել ու զարգացրել են: Երբ սկսվել է զինակոչը, մի թուրքական ընկերություն վերցրել է: Հայ աղջիկները իսլամացել են: Շուրջ 9 մուսուլման աղջիկ է աշխատում» (էջ 461): Այս մի քանի տողում ամփոփված են Հայոց ցեղասպանությանն առնչվող երկու կարևոր խնդիրներ, որոնցից առաջինը հայերի լքյալ գույքին տիրանալու շնորհիվ հարստանալն է, ինչն առավել քան բնական է ընկալվել, իսկ երկրորդը իսլամացման միջոցով հայ կանանց ու երեխաների՝ կոտորածից փրկվելու հնարավոր ուղին է: Կարևոր է շեշտել նաև, որ թուրք գեներալի պնդմամբ ոչ բոլոր հայերն են այսպես կոչված «կոմիտեականների» գործողությունների կողմնակիցը եղել: Փաստորեն նա առաջ է քաշում «վատ, հրահրիչ» և «լավ» հայերի գաղափարախոսությունը, որը մինչ օրս կիրառում է թուրքական քարոզամեթոդներն՝ սփյուռքի իբր «վատ» հայերին մյուս հայերից «տարանջատելու» համար:

¹ Karabekir K., Günlükler (1906-1948) (1-2.Cilt), hazırlayan Y. Demirel, İstanbul, 2009, s. 574 (այսուհետև այս գրքին հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ):

«Հայ կումիտեականներ», «հայկական չեթեներ», «դաշնակցականներ» ընդհանրական արտահայտությունները կիրառելիս Քյազըմ Քարաբեքիրը չի անդրադառնում առանձին հայ գործիչների: Բացառություն է միայն Անդրանիկ Օզանյանը, որի մասին նա գրքում հիշատակում է երեք անգամ: Առաջին անգամ գորավարի անունը հիշատակում է 1918 թ. մարտի 12-ին Էրզրումի գրավման համատեքստում. «Էրզրումի բերդի գունդը 500 հոգուց է, ռուս սպաների մեծ մասը այս գնդում է: Մորելը առավոտյան 5-ին հանձնվելու հրաման է տվել: Սակայն հեռախոսը փչացել էր: Ժամը 7-ին են տեղեկացել: Մորելը և Անդրանիկը ձիով փախել են: Զինվորականները մտել են քաղաք, ռուս սպաները գերի են ընկել» (էջ 476): Երկրորդ անգամ գորավար Անդրանիկի անունը նշվում է 1918 թ. հունիսի 22-ի գրառումում. «Ըստ Շահթահթում բանակի հրամանատար Շյուքրու էֆենդիի զեկույցի (Բեյազիթ-Իզդիր-Գյումրի հեռախոսով)՝ հայ հրամանատար Անդրանիկը, հազար հեծյալով, երկու հազար հետևակով Շահթահթի մոտ սահմանը հատելով, գնում է դեպի Վանի կամ Ռումիեի կողմը» (էջ 517): Երկու ամիս անց՝ օգոստոսի 21-ին, Քյազըմ Քարաբեքիրը գրում է. «Զանգեզուրի նահիեից¹ եկել են 200 մուսուլման և նահիեի ղեկավարները: Հայերը և մուսուլմանները սկսել են վառել մուսուլմանների գյուղերը: Շեքար գյուղում, որտեղ չորս գյուղի բնակչություն էր պատսպարվել, ջարդ են կազմակերպել: 51 մարդ է փրկվել: Անդրանիկը 800 հետևակով, 400 ձիավորով, 4 հրանոթով, 2 գնդացիով Գերուսի (2000 տուն ունեցող ավան) հարավ-արևմուտքում՝ Թաթաքում է: ... 8000 զինյալ հայ կա: Եթե Անդրանիկը կանոնավոր ուժ ևս ներառի, 2000-ով կկարողանա ավելացնել» (էջ 528): Ակնհայտ է, որ նա բացարձակապես չի անդրադառնում Անդրանիկի կերպարին կամ նրա գործունեությանը, այլ բավարարվում է սոսկ կոնկրետ գործողություններում նրա մասնակցության նկարագրությամբ:

Առհասարակ, Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Օսմանյան կայսրության արևելյան նահանգներում և Անդրկովկասում ստեղծված իրավիճակը յուրահատուկ տեղ ունի Քյազըմ Քարաբեքիրի օրագրում: Նա ներկայացնում է տարածաշրջանում ուժերի դասավորությունը, հայվրաց-ադրբեջանական հակասությունները, Ռուսաստանում ընթացող բուլշևիկների և մենշևիկների պայքարը, Անտանտի քաղաքականությունը և այդ ամենի համատեքստում պարտված ու մասնատման եզրին կանգնած թուրքական պետության փրկության իր տեսլականը: Գրեթե ամենօրյա գրառումներում իրադարձությունների զուտ փաստական նկարագրությանը հետևում են համաշխարհային և թուրքական խնդիրներին առնչվող Քյազըմ Քարաբեքիրի մտորումները, ամենատարբեր հարցերի շուրջ թուրք և օտարերկրացի պաշտոնյաների հետ նամակագրության կամ քննարկումների արդյունքում ստաց-

¹ Նահիե (թուրք. nahiye)՝ Օսմանյան կայսրության վարչական միավոր կազայի (գավառակ) և գյուղի միջև:

ված եզրահանգումները, ռազմաքաղաքական գործընթացներին մասնակցող կարևոր անձանց գործունեության գնահատականները:

Անդրադառնալով դեպքերի զարգացումներին օր առ օր՝ Քյազըմ Քարաբեքիրը մանրամասն նկարագրում է հայերի նկատմամբ թուրքական բանակի հարձակումները և նույնիսկ կոտորածները՝ փորձելով դրանք ներկայացնել որպես ինքնապաշտպանության դրսևորում¹: Ընդ որում, ճակատամարտի կամ կռվի մասին տեղեկությանը կարող է հետևել որևէ սպայի հետ թեյախմությանն առնչվող լուր, ինչ-որ անդրադարձ ներքին գործերին կամ առողջական խնդրի մասին տեղեկություն:

Հայ-թուրքական շփման գծում կարևորագույն իրադարձություններից է 1918 թ. ապրիլին թուրքական զորքերի կողմից Կարսի գրավումը: Իր համար խորհրդանշական այս իրադարձությունից շաբաթներ առաջ Քյազըմ Քարաբեքիրն օրագրում գրում է. «Մարտի 11/12 երազումս Էնվեր փաշային տեսա: Ասաց՝ Կարսը գրավեք» (էջ 473): Այս տողերն արտացոլում են նրա հավատարմությունը պատերազմում պարտություն կրած երիտթուրքերին և նրանց քաղաքականության շարունակականությունը: Նույնն է վկայում նաև ապրիլի 21-ի նրա գրառումը. «Երազումս Կարսի հանձնումը տեսա: Մեծ Օսմանյան դրոշը ծածանեցինք» (էջ 491): Ապրիլի 25-ի գրառումում նա նկարագրում է Կարսի գրավումն ու հայերի նահանջը, ինչպես նաև քաղաքում տիրող ընդհանուր իրավիճակը:

Կարսի գրավումից ոչ պակաս կարևորվում են նաև 1918 թ. մայիսյան հերոսամարտի օրերը: Քյազըմ փաշան նկարագրում է թուրքական բանակի և հայ պարտիզանների դիրքերը, մեծ ու փոքր բախումները, օր առ օր՝ Մարդարապատի, Բաշապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը, մանրամասն անդրադառնում է նաև Ալեքսանդրապոլի վրա հարձակմանը. «[14 մայիսի 1918 թ.] Գյումրու ճակատամարտ: Ժամը երեքը չեղած Արփաչայն անցնելու հրաման եկավ: Կեսգիշերին նորից հրաման եկավ: 3:30 հանձնվելու առաջարկ է արվելու: Թիհնիսի բերդից շուրջ 300 մետր դեպի արևելք գտնվող դիտակետ հասանք: Սկսեցինք անցումը բոլոր ուղղություններով: Ջենքի ձայներից մեր միավորված ճակատում դիմադրությունն արագ կոտրվեց: Հայերն ամենակատաղին Ղարաքիլիսայում են դիմադրում... Թեև ժամը 5-ից հետո հայերը առաջարկեցին Գյումրին հանձնել, սակայն 5:30-ից հետո մոտ 500 հայ զինյալ ճակատի արևմուտքում դրսից հարձակում սկսեցին» (էջ 501):

Անդրադառնալով հայերի կորուստները՝ Քյազըմ Քարաբեքիրը թուրքական բանակի պարտությունները փորձում է հնարավորինս մեղմ ներկայացնել: Միաժամանակ նա խիստ դժգոհություն է հայտնում սեփական բանակից, որը նրա իսկ խոսքերով՝ հազիվ է դիմակայում «ավազակների»՝ հայերի

¹ 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում թուրքական կողմի կազմակերպած ջարդի մասին մանրամասն տե՛ս **Մարգարյան Ե., Սահակյան Ռ.**, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 58-64:

հետ դժվարին պայքարում (էջ 507):

Զարմանալիորեն չանդրադառնալով անդրկովկասյան երեք պետությունների անկախացման հարցին՝ Քյազըմ Քարաբեքիրը միայն բավարարվում է փաստելով, որ հայերն ու վրացիներն ունեն գերմանացիների աջակցությունը պետություն ստեղծելու հարցում, այնուհետև նշում է, որ հայերի հետ հաշտություն է կնքվել: Ուշագրավ է, որ 1918 թ. հայ-թուրքական բանակցությունների համատեքստում նա գրում է գաղթականների մասին և առանց մանրամասնելու, թե նրանք որտեղից են հայտնվել, շեշտում է, որ դա բարդ հարց է (էջ 517):

Հայաստանի անկախացումից հետո թուրքերի չդադարող հարձակումների գագաթնակետն է դառնում 1920 թ. թուրք-հայկական պատերազմը¹: Թուրքական բանակի անմիջական հրամանատար Քյազըմ Քարաբեքիրի հուշերը, հիրավի, արժեքավոր սկզբնաղբյուր են: Հարկ է ևս մեկ անգամ շեշտել, որ նա իր օրագրում ներկայացնում է ոչ միայն տվյալ օրվա դեպքերը, այլև վերլուծության է ենթարկում տարածաշրջանում ու աշխարհում տեղի ունեցող զարգացումները, փորձում տուրք տալ սեփական քաղաքականությանը՝ ելնելով ամեն օր փոփոխվող իրողություններից:

Բանակցելով տարածաշրջանում որոշակի կշիռ ունեցող բոլոր ուժերի հետ՝ Քյազըմ Քարաբեքիրը փորձում է իր երկրի համար ամենամեծ օգուտը քաղել: Ընդ որում, դատելով օրագրային գրառումներից՝ նա հանդես է գալիս որպես զգույշ և հմուտ դիվանագետ: 1919 թ. չդադարող թուրքական հարձակումների պատասխանատվությունը նա կրկին բարդում է հայերի վրա՝ փորձելով քարոզչական միջոցներով այդ ժողովրդի դեմ հարձակման հող նախապատրաստել: Միաժամանակ գիտակցելով, որ բոլշևիկներն աստիճանաբար հզորանում են՝ նա իր կառավարությանն առաջարկում է ընդլայնել նրանց հետ համագործակցությունը: Չնայած 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղի ունեցած թուրք-հայկական բախումներին, որոնք օր առ օր նշված են օրագրում, թուրքերը լայնածավալ գործողություն չեն սկսում: Քյազըմ Քարաբեքիրը կարծես սպասում է անդրկովկասյան պետությունների խորհրդայնացմանը և, օրինակ, մայիսի 11-ի Հայաստանի խորհրդայնացման փորձի անհաջողության լուրը ներկայացնելով՝ նշում. «Չկարողացան, դաշնակները հաղթեցին» (էջ 624): Հունիս-հուլիս ամիսներին բախումներն ուժեղանում են, սակայն հունիսի 9-ի գրառումում նա նշում է, որ մի անտեսանելի ձեռք թույլ չի տալիս լայնածավալ գործողություն իրականացնել (էջ 627):

Այս ամիսներին ակտիվացած գործողությունների համատեքստում ուշագրավ է ևս մի քարոզչական մոտեցում. մարդկային կորուստները ներկայացնելիս Քյազըմ Քարաբեքիրը հայ զինվորների համար օգտագործում է թուրքերեն «maktul» – «սպանված» բառը, իսկ թուրքերին կոչում «şehit» – «նա-

¹ Պատերազմի ընթացքի մասին մանրամասն տե՛ս **Կարապետյան Ս.**, 1920 թ. հայ-թուրքական պատերազմը և Սովետական Ռուսաստանը, Երևան, 1965:

հատակ, մարտիրոս»: Մեպտեմբերին անցնելով լայնածավալ հարձակման՝ թուրքերը հոկտեմբերի 30-ին գրավում են Կարսը: Մուսթաֆա Քեմալի խոսքերով՝ «հիասքանչ ռազմական գործողություն»¹ հանդիսացող այս իրադարձությունը Քյազըմ Քարաբեքիրը ներկայացնում է առանց ոգևորության, բայց մի տեսակ լուռ հպարտությամբ. «Ժամը 8-ին Կարսի արևելյան ճակատում հայկական բանակի վրա հարձակում... Երեք ժամ տևած մարտում հայկական բանակը ցաքուցրիվ եղավ: 3:30 մտանք Կարս» (էջ 657): Քյազըմ փաշայի համար, սակայն, Կարսի գրավումից ոչ պակաս կարևոր է նաև նոյեմբերի 7-ին Գյումրու գրավումը: Քաղաքի հանձնումից հետո սկսած խաղաղության բանակցություններում էլ, օգտվելով իր առավելությունից, Քյազըմ Քարաբեքիրը շատ ծանր պայմաններ է առաջարկում և գոհունակությամբ շեշտում, որ հայերն ընդունել են իր պայմանները. «[9 նոյեմբերի 1920 թ.] Հայաստանի արտգործնախարարը երեկոյան գնացքով մի սպա է ուղարկել, հրադարարի պայմանները առավոտյան են ստացել, ուսումնասիրելու ու պատասխանելու համար խնդրեց 24 ժամ: Համաձայնեցի... [10 նոյեմբերի 1920 թ.] ժամը 7:15 գնացքով Իմամլըից եկած հայ սպան հայտնեց, որ արտգործնախարարությունն ընդունում է մեր պայմանները» (էջ 660): Բնական է, որ այս պայմաններից առաջինը Սևրի պայմանագրից հրաժարման պահանջն էր: «Ասացի, որ հայ և թուրք ժողովուրդներին ուղղված անկեղծ կյանքի մաղթանքով ենք սկսում նիստը...,- գրում է Քարաբեքիրը,- մեր առաջին գրավոր առաջարկը Սևրի պայմանագրից հրաժարումն էր: Նա (Ա. Խատիսյանը – Ն. Պ.) ասաց, որ իրենց գալն առանց այդ էլ դրա ապացույցն է: Մի փոքր բանակցելուց հետո՝ համաձայնեցին» (էջ 662): Բանակցությունների երրորդ օրվա՝ նոյեմբերի 27-ի գրառման մեջ նշվում է. «Տոնում ենք Սևրի պայմանագրի ոչնչացումը» (էջ 663):

Ինչպես հայտնի է, Հայաստանի խորհրդայնացումը թույլ չտվեց թուրքերին օգտվել Ալեքսանդրապոլի պայմանագրի դրույթներից: Սակայն Քյազըմ Քարաբեքիրի օրագրից ակնհայտ է դառնում, որ լայն առումով քեմալականներին ձեռնառու էր Հայաստանի խորհրդայնացումը՝ որպես Անտանտի երկրներին հակազդող ուժ: Դեռևս 1920 թ. փետրվարի 6-ի հեռագրում Մուսթաֆա Քեմալը գրում է նրան, որ Կովկասը միակ ճակատն է, որտեղ թուրքերը կարող են դաշնակիցների դեմ հակազրոհ ձեռնարկել, ուստի այնտեղ բոլշևիկների իշխանության ամրապնդումը բխում է թուրքական շահերից: Հակառակ դեպքում, եթե երեք անդրկովկասյան պետությունները կարողանան ստեղծել միասնական արևմտամետ ճակատ, դա կլինի թուրքերի՝ անկախ պետություն ունենալու հույսերի վերջը²: Ամիսներ անց արդեն Ամասիայից ուղարկված հեռագրում Մուսթաֆա Քեմալը, օգտվելով անգլիացիների և բոլշևիկների հակամարտությունից, կրկին գրում է բոլշևիկների հետ համագործակցությունը

¹ Еремеев Д., История Турецкой Республики с 1918 года до наших дней, М., 2017, с. 72.

² Gökyay B., Turkish Settlement and the Caucasus, 1918-20// "Middle Eastern Studies", 1996, vol. 32, n° 2, p. 45-76, 62.

խորացնելու անհրաժեշտության մասին: Մոսկվան իր հերթին ցանկանում էր իր սահմաններին տեսնել անկախ, ուժեղ և բարեկամական Թուրքիա, որ կարող էր իր տարածքը չդարձնել խորհրդային հանրապետությունների դեմ ագրեսիայի հարթակ¹: Ուստի զարմանալի չէ, որ քեմալական զորքերի ներխուժումը Հայաստան և Վրաստան, այնուհետև պետությունների խորհրդայնացումը թեև որոշակի առերևույթ սառնության պատճառ դարձան քեմալա-բոլշևիկյան հարաբերություններում, սակայն լուրջ բախման առիթ չդարձան:

Ինչպես նշում է թուրք պատմաբան Բյուլենթ Գյոքայը, Հայաստանի խորհրդայնացումից հետո «թուրքերը չարունակեցին ավանդաբար ռուսական համարվող տարածքներում գործել իսկ ռուսները՝ թուրքական: Հայաստանի դժբախտությունը բոլշևիկների և թուրքերի միջև գտնվելն էր»²:

Наира Погосян – Армяне в дневниках Кязыма Карабекира

Армяно-турецкие отношения в годы существования первой Республики Армения занимают особое место в мемуарах османского и турецкого военачальника и политика Кязыма Карабекир-паши. Многочисленные упоминания армян в дневнике турецкого офицера в основном укладываются в рамки проводимой турками традиционной антиармянской политики отрицания. Надо также отметить, что многие необъективные и псевдонаучные утверждения, используемые в официальной турецкой историографии и современном социально-политическом дискурсе страны, внедрены Карабекиром. В рамках данной статьи сделана попытка представить интерпретацию майских героических сражений 1918 года и турецко-армянской войны 1920 года в дневнике Карабекира.

Naira Poghosyan – The Armenians in Kyazim Karabekir's Diaries

The Armenian-Turkish relations in the period of the first Republic of Armenia have a special place in the memoirs of the Ottoman and Republican Turkish military commander and politician Kyazim Karabekir Pasha. Multiple references to Armenians in the diary of the Turkish officer are mainly in the frames of the traditional anti-Armenian denial policy pursued by the Turks. It can also be said that some of the preconceived and pseudo-scientific statements used in the official Turkish historiography and modern social and political discourse of the country were invented by Karabekir. In this article, we will try to shed light on the interpretation of the heroic battles of May 1918 and the Turkish-Armenian war of 1920 in the diary of Karabekir.

Ներկայացվել է 29.01.2019

Գրախոսվել է 20.02.2019

Ընդունվել է տպագրության 21.02.2019

¹ Еремеев Д., նշվ. աշխ., էջ 75:

² Gökaу В., նշվ. աշխ., էջ 67: